№ 9 ՅՈՒԼԻՍ 1894

ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԿԸ ՅԱՂԹԻ

Յուլիս, 1894 թ.

Մեր յեղափոխական կեանքն իր արագ զարգացման հետ և ծանր րոպէներ է անց կացնում: Հայ ժողովուրդը ներկայանալով բացարձակապէս երկրի յեղափոխական տարրը, իր վրայ է դարձրել կառավարութեան ամբողջ ոյժը: Կռիւը վաղուց է սկսված և կառավարութիւնը չի խնայում ոչ մի միջոց, ոչ մի ոյժ յաղթութիւնը տանելու համար: Մենք շատ լաւ գիտենք, որ այժմ ֆիզիքական ոյժը կառավարութեան կողմն է, բայց բարոյական ոյժը մեր կողմն է. կառավարութիւնը մեզ ներկայանում է միայն իր ֆիզիքական ուժով, այն էլ միշտ մարդի, միշտ ստոր ձևով: Մենք դուրս ենք գալիս նրա առաջ մեր տկար ֆիզիքական, բայց դրա հետ և մեծ բարոյական ուժով, և այդպէս է եղել բոլոր ազգերի պատմութիւնը: Բռնակալ կառավարութիւնների ամբողջ ոյժը կազմված է եղել վարձկաններից և հացկատակներից, նա իր գոյութիւնը, իր ըէժիմը ճգնել է պահպանել թալանողների, կեղեքողների և բռնաբարողների օգնութեամբ, նա ազատ ասպարէզ է տուել գողերին ու աւազակներին. իսկ յեղափոխական ժողովրդները դրա դիմաց ծնել են անձնազոհներ և հերոսներ. յանուն ժողովրդի, յանուն ազատութեան ընթանք կախաղան են բարձրացել. դրանց իդէալը, կռվելու դրդիչ ոյժը եղել է ժողովրդի ազատութիւնը, նրա անդորը և բարեկիցկեանքը: Այդ կացութեան մէջ է գտել յեղափոխականը յառաջադիմութիւնը, դրա մէջ է գտել իրաւունքի, համոզմունքի, խօսքի ազատութիւնը, որ անհրաժեշտ է համարվում հասնելու այն բարձրը հասարակական կազմակերպութեան, ուր թէ անհատը և թէ համայնքը զգում է իրեն երջանիկ, ուր նա կարողանում է բաւարարութիւն տալ իր կենսական անհրաժեշտ պահանջներին: Իսկ կառավարութիւնը... ողորմելի է նա, նրա իդէալն իր ստամոքսն է, իր անասնական պահանջներին բաւականութիւն տալը...

Ո՞վ է բարձրը... և յաղթութիւնը կը տանի նա, ով բարձր է: Այդ մեզ ցոյց է տալիս պատմութիւնը շատ և շատ փաստերով, առանձնապէս յեղափոխութեան պատմութիւնը, լինի դա Անգլիական, Ամերիքական, Ֆրանսիական և վերջապէս նոյն իսկ նորերումս ազատված ժողովրդների յեղափոխութեան պատմութիւնը. այդ տեղ կուռոը եղել է ինքը — ժողովուրդն իր թոյլ ֆիզիքական, բայց մեծ բարոյական ուժով՝ կազմակերպված և ուժեղ կառավարութեան, պետութեան դէմ. և ժողովուրդը տարել է յաղթութիւնը, ձեռք է բերել անկախ կեանք, ինքն իրեն կառավարելու իրաւունք, մի իրաւունք, որ անրոնաբարելի է, բայց բռնաբարված է այժմ ուզուրպատորտիրաններից: Բայց ինչ գնով են ընդունք այդ ձեռք բերել: Իրաւական չէր մի կողմից արտաքին թշնամին՝ կառավարութիւնը, միւս կողմից նա ստիպված էր պաշտպանվել ներքին թշնամիներից՝ դաւաճաններից, դաւաճաններ, որոնք դուրս են եկել նոյն իսկ յեղափոխական շրջանից, յեղափոխական տարրից. բայց և այնպէս նա տարել է յաղթութիւնը: Նա ունեցել է րոպէներ, երբ ամեն ինչ կորցրած էր համարվում, երբ բռնակալ կառավարութիւնը յաղթական փող էր հնչեցնում, հանդէս էր կազմում յեղափոխականների գլուխները զազուխի հանած, երբ քաղաքների ու գիւղերի փողոցների ամեն մի անկիւնում կախում էր յեղափոխականների դիակներն իբրև նշան յաղթութեան. երբ նա մոլեգին օրգիաներ էր կազմում, ճրագալոյցներ անում. երբ նրա հացկատակ արբանեակները յեղափոխականների արիւնշաղախ դիակների շուրջը յաղթական պարեր էին բռնում... բոլորը, բոլորը խարուսիկ, ըստ երևութին է եղել. յեղափոխական ժողովուրդը երբէ՛ք չի մոռել բարոյապէս: Այդ յաղթական հանդէսներն ու իր արիւնով սնված, գուցէ երեկ իր շարժման առաջնորդ եղած, բայց այսօր բռնակալութեան ձեռքին քսու գործիք դարձած մատնիչները չեն յուսահատեցրել նրան և նա շարունակել է իր կռիւն ու յաղթող հանդիսացել:

Մեր յեղափոխական կեանքը նոյն տեսակ րոպէի մէջ

է մտել։ Սուլթանի կառավարութիւնը կոտորածներ է անում, տանջում, չարչարում է յեղափոխականներին և այդ դժոխային միջոցով թոյլ գործիչների միջից դաւաճաններ է հանում և այն էլ այնպիսի անձնաւորութիւններից, որոնք եղել են ժողովրդի հերոսը և ոգևորող ոյժը. բայց նա ահա այսօր դաւաճան է. նա իր բարոյական բարձրութիւնից ընկել է, մատնիչ, դաւաճան է դառել։ Ի՜նչ կայ աւելի զզուելի, աւելի ստոր, քան այս անունը։ Դաւաճա՜ն, անէ՛ծք քո յիշատակին և... մահ քեզ. ահա քո վարձատրութիւնը ժողովրդից, այն ժողովրդից, որ մի ժամանակ քեզ սիրում, պաշտում էր, որ քո կեանքի համար զոհեր էր տալիս։

Այո՛, Սուլթանի կառավարութիւնը մեզանից մեր դէմ դաւաճաններ է հանում. այո՛, հայ յեղափոխականներն իրենցից դաւաճաններ են արտադրում։ Եւ ո՞վքեր են դրանք. դրանք դեռ երէկ լեռներում, ձորերում թափառում էին նուիրված իրենց վեհ նպատակին, դրանք շղթայակապ բանտ տարվեցան իբրև կօմիտաճիներ, դրանց անունովն էր երդվում լիայոյս ժողովուրդը. իսկ այսօր նոյն մարդիկ, չունենալով բաւական բարոյական ոյժ յեղափոխութեան դառը բաժակը մինչև վերջ խըմելու, անցել են ժողովրդի թշնամու կողմը և մատնում են իրենց վաղեմի ընկերներին, սրտակից մտերիմներին... Բայց մի՞թէ դա կարող է յուսահատեցնել մեզ, մի՞թէ հայ ժողովուրդը կը թուլանայ, կը վհատվի. ո՛չ, նա չի վհատվի, նա կը շարունակի եռանդով իր դատի պաշտպանութիւնը, որովհետև դաւաճանի դիմացը, նրա մրոտված յիշատակի մօտ կանգնած են և իր հերոսները, որ անլսելի տանջանքների տակ անգամ մնում են իրենց բարձրութեան վրայ, որոնք մեռնում են քաջաբար, արհամարհելով ստոր ու տմարդի թշնամուն։ Եթէ ունենք դաւաճաններ, ունենք և հերոսներ. ո՞ր յեղափոխական ժողովուրդը չի ծնել դաւաճաններ։ Ազատ չի եղել դրանից և ո՛չ մի ժողովուրդ. ամեն մի յեղափոխական ազգ ունեցել է իր փոքրոգի դաւաճանները, բայց և այնպես նա տարել է յաղթութիւնը. և հայ ժողովուրդը պիտի հաւատացած լինի, որ իրենն է յաղթութիւնը, որովհետև բարոյապես բարձր է թշնամուց, որովհետև կեանքի տնտեսական և պատմական զարգացումը ճակատագրաբար քշում է դէպքերին դէպի այդ կողմը։ Ողորմելի՜ բռնակալութիւն, որ ուզում է աւազի պատ կանգնեցնել պատմական զօրեղ, անպարտելի, բայց դանդաղ հոսանքի առաջ... Ո՛չ կառավարութեան տանջանքները, ո՛չ նրա կոտորածը, ո՛չ լրտեսները և դաւաճանները յուսահատութիւն չեն պատճառի. յեղափոխութեան գաղափարը նրա կեանքի մէջ խոր արմատներ է ձգել և ոչինչ, ոչինչ արմատախիլ անել չի կարող. տխուր երևոյթները նա կարժանացնի իր արհամարհանքին և եռանդով կը շարունակէ իր կռիւը, որովհետև միակ միջոցը, ներկայ վիճակից ազատվելու միակ ելքը յեղափոխութիւնն է. նա է որ կը պսակի նրա աշխատանքը, նրա յոյսը. ժողովրդի կողմն է պատմութիւնը, նրա հետ է և բարոյական ոյժը. նա կը յաղթի։

ՆԱՄԱԿ ՊՕԼՍԻ 8

„Մինչև դևին դժոխքը չը ցուցնես, արքայութիւնը չի ճանչնար“ կըսէ հայկական առածը։ Դաւաճան Աշղեանը մինչև Յակոբոսի բէվոլվերի փողը չը տեսաւ, մինչև մահուան երկիւղը չզգաց իր լեչի վրայ և մահը չտեսաւ իր առջև, իր պարտքը չյիշեց։

Դէպքի հետևեալ օրն իսկ իր հրաժարականը ուղարկեց դատական գործոց նախարարին, բայց չընդունվեցաւ։ Քանի մը օրէն ետքը թիկնապահներով, լրտեսներով, ծպտեալ ոստիկաններով շրջապատված՝ նա գընաց նախարարին անձամբ մատուցանելու հրաժարականը։

Դատական գործոց նախարարը աշխատած է համոզել զինքը ետ առնել իր հրաժարականը և կարևորութիւն չտալ ամենևին Յակոբոսի դէպքին, մանաւանդ որ կառավարութիւնը պատրիարքի անձը և տունը ամեն կերպ պիտի պաշտպանէ. և հարկաւոր միջոցներն արդէն ձեռք առնված են։ Զմոռնամ ասել, որ դէպքի հետևեալ օրն իսկ Նազըմ-բէյի — այժմ փաշայ — կարգադրութեամբ երկու զինուոր հրացաններով պատրիարքի տան մուտքը կը պահպանեն ներսի կողմէն, իսկ դուրսէն ծպտեալ լրտեսներ պահապան շուներու նման տան շուրջը աչալուրջ կը հսկեն և մէկու մը վրայ ամենապտիկ կասկած նկատածին պէս՝ մարդը կը ձերբակալեն և կառաջնորդեն ոստիկանատուն, ուտէն գլուխ կը խուզարկեն, երկար բարակ հարցաքննութեան են թարկելէն ետքը միայն մարդը ազատ կը թողուն։ Յարոյայսպիսի դէպքեր շատ անգամ կրկնված են, այնպէս որ մարդիկ որ և է կասկածէ զերծ ըլլալու համար հարկադրված են, եթէ ճամբան պատրիարքի տան մոտով է, ուրիշ ճամբով, պտոյտներ անելով, իրենց ուզած տեղը երթալու։

Շնայելով կառավարութեան տրված ամեն ապահովութեան, Աշըղեան սարսափահար կը պնդէ իր հրաժարականի վրայ։ Նախարարը վերջապէս կը խոստանայ հրաժարականը Բ. Դուռն ուղարկել։

Աշըղեան Բ. Դուռ հրաւիրված լինելով, Մեծ Եպարքոսը նոյնը կառաջարկէ, ինչ որ դատական գործոց նախարարը. բայց Աշըղեան ոչ մի կերպով չի համոզվիր յիշելով Յակոբոսի խօսքերը. „Հոգ չէ, եթէ ինձ չյաջողվեց քեզ սպանել, ընկերներուս մէկուն պիտի յաջողվի“ և կաղաչէ, որ իրեն թողնեն Արմաշու վանքը քաշվիլ և „հոն աղօթել վասն թանգագին կենաց փրկչի հափառ կայսեր“։

Եպարքոսին հրաժարականը մատուցած օրէն ի քաղաք այլ ևս բոլորովին հրաժարեցաւ պատրիարքութենէ և ոչ մէկ գործի ոչ կը խառնվէր ու ոչ կը ստորագրէ։

Ոստիկանութեան նախարարը և Սիմէոն-բէյ ամ

ջանք ըրին ետ առնել տալ Աշըղեանին հրաժարակա-ները, դարձեալ չյաջողեցան։ Ան ատեն Սիմէօն-բէյի կար-գադրութեամբ սկսաւ պատրիարքական բոլոր գործերը վարել փոխանորդ ՃԷվահիրճեան վարդապետը։ Բայց ՃԷվահիրճեանն ալ երկար չկրցաւ վարել այդ պաշ-տօնը, որովհետև յեղափոխականներն անստորագիր նա-մակաւ մը սպառնացին իրեն ևս սպանել, եթէ շարու-նակէ ստանձնած պաշտօնը և անմիջապէս չհրաժարի։ ՃԷվահիրճեան անմիջապէս իր հրաժարականը և պատ-րիարքական կնիքը ու թուղթերը կը յանձնէ կրօնա-կան ժողովոյ քարտուղար Փահլավանեանին, որը և կը վարէ այժմ պատրիարքական գործերը, իսկ կնիքը կը քաշ-վի Սամաթիա, իր սեփական տունը։

Ամէն մը ի վեր դադարած են բոլոր ժողովները, ի միջի այլոց և ապօրէն ընտրված կրօնական ժողովը։

Յակոբոսը, որ փորձեց սպանել դաւաճան Աշըղեա-նին, ինչպէս յայտնի է, ձերբակալվեց և անագորոյն տանջանքներու ենթակվեց։ Յակոբոսի կրած տանջանք-ներն ամենաքաջառողջ և երկաթի կամք ունեցողն ան-գամ կը մահացնէին ու կը սպանէին, ուր մնաց թէ Յա-կոբոսի պէս թոյլ և տկարակազմ մէկուն։ Յակոբոսը այդ տանջանքներէն հիւանդացաւ և անցեալ շաբաթ հոգին աւանդեց։ Նահատակի մարմնի հետ ինչպէս վար-վեցան գազանները, յայտնի չէ, որովհետև մարմինը չյանձնեցին պատրիարքարանին։

Թող թիւրք բռնապետութիւնը շարունակէ իւր տը-մարդի, մարդախոշոշ վարմունքը հայ յեղափոխական-ներու հետ, բայց թող վստահ ըլլայ որ այդ ալ եր-կար չի տևիր, որ անմարդասիրական, գազանական վար-մունքը հայ յեղափոխականներու թիւը չնւազցնելէն և յեղափոխութեան չվնասելէն զատ, պիտի բազմացնէ անոնց թիւը, պիտի արծարծէ, ծաւալէ ու զօրացնէ յե-ղափոխութիւնը և իր սեփական կործանումն արագացնէ։ Թիւրք կառավարութիւնը տանջեց, չարչարեց, խոշտան-կեց Յակոբոսի մարմինը, բայց անոր հոգին անմահ է և կապրի իւր սիրեցեալ ընկերներուն մէջ, անոր յի-շատակն անջինջ պիտի մնայ բոլոր յեղափոխականներու սրտին մէջ։ Իսկ այն սուրբ գործը, որուն Յակոբոսը նուիրեց իր անձը, պիտի շարունակեն իր հաւատարիմ ընկերները և պիտի լուծեն Յակոբոսի և իր ընկերնե-րու արդար վրէժը։

Սիմէօն-պէյի մահուան լուրը չստուգվեցաւ։ Այդ առ-թիւ մօտ 200 ձերբակալութիւն եղան, բայց բուն գոր-ծիչները՝ Տիգրանը և Լէոնը, որոնց անունները սովո-րական տանջանքներով կորզեցին Սիմէօն-պէյի սպանող-ներէն, չկրցին տակաւին ձերբակալել։ Տիգրանի ծնող-քը, եղբայրները, փեսաները, ազգականները և ընկեր-ները բոլորը ձերբակալվեցան։

Թիւրք կառավարութիւնը դատեց վերջապէս Սիմէ-օն-պէյի վիրաւորիչներուն. Ալլահը դատաստան հա-մարէ։ Դատարանը դատապարտեց մահուան Թադէոսը և Ստեփանը որպէս սպանիչներ, իսկ ոսկերիչ Ստեփանը և խահֆէչի Համբարձումը — բանտարկութեան։ Ձերբա-կալվածներէն շատերը արձակվեցան, բայց մօտ 100 հո-գի տակաւին բանտն են։

ՆԱՄԱԿ ՏԱՐՈՆԻՑ

Թէև նախորդ թղթակցութիւններէն յայտնի է Տա-րոնոյ և իր շրջակայ գաւառակաց տնտեսական և քա-ղաքական անկումը, բայց կառավարութեան կատաղու-թիւնքը, քիւրդ աշիրէթներու մոլեռանդութիւնը չափ ու սահման չունենալով, կը փափագիմք անդադար գրել և „Դօշակի“ միջոցաւ արտայայտել Մայր Հայաստանի մէջ տեղի ունեցած արտասովոր անցքերն, վստահ լինելով մեր հայրենաբնակ և օտարահպատակ ազգայնոց վրայ, որ ի նկատի ունենալով Տարոնոյ և իր շրջակայ գաւառակաց աննկարագրելի չարչարանքն ու հալածանքն, ըստ այնմ կը չափեն իրենց գործունէու-թեան աստիճանն, զի բնաւ ապահով չենք մեր կենաց և պատուոյ նկատմամբ։ Տաճիկ կառավարութեան փա-փաքներն ու ձգտումներն գրէթէ իրականացան։ Տարո-նը յերեսաց քաղաքական ու տնտեսական հալածանաց բոլորովին աւերակ դարձած՝ այսօր բիւրաւոր թշուառ ընտանիք փողոցէ ի փողոց կը շրջին, Տիգրանակերտի, Հալէպի և այլ դաշտեր։ Դեռ Տարոնոյ թափառիկ ժո-ղովուրդը երջանիկ կը համարենք, այն պատճառաւ, որ գէթ կրնան փախչիլ այլ և այլ գաւառներ և մու-բացկանութեամբ ապրել, իսկ Սասունը այդ միջոցին ևս զուրկ է, քան զի պաշարման մէջ լինելով՝ չեն կարող այլուր դիմել, որի հետևանքն անօթի և ծարաւ մեռնելն է, թէև այժմ բոլորովին ազատ են թէ կառավարու-թեան և թէ քրդաց ոտնձգութենէն։ Տաճիկ կառավա-րութիւնը ժողովրդի կենսական խնդրոց փոխանակ որ և է միջոց մը փնտռելու, իր սաստիկ հալածանաց սահ-ման կաւելցունէ և օրէ օր կը բազմապատկէ։ Մենք, արդարև, կը շփոթիմք, թէ հազար ու մի կնճռոտ անց-քերէն ու պարագաներէն որոնք յիշատակենք և որոնք զանց առնունք, հազար ու մի մանր մունր դէպքերը ի բաց թողլով, որք այլ ևս սովորականի կարգն անցած են։ Միայն թէ կոչում կընենք մեր հայրենաբնակ և օտարահպատակ ազգայնոց, որ ուշադրութիւն դարձնեն դէպ այս ժողովուրդը, որ մահուան փոսի վրայ կանգնած, փափագով կը սպասէ ոչնչութեան մէջ խորասուզվելուն։ Քաջ գիտացէք, եղբարք, որ եթէ այս դրութեան յա-ռաջիանն գէթ ամիսներ, օր մը յանկարծ հայ հասա-րակութեան յուսահատ ըլլալը պիտի լսեմք։ Մենք յա-նուն Տարոնցի և Սասունցի հայուն կրնամք կատարելա-պէս ըսել և հաստատել, թէ „մեք մեզի նշանաբան ընտրած ենք՝ մահ կամ ազատութիւն“, առանց մտածելու այլ ևս թշնամու ուժերու անհամեմատ ա-ռաւելութեան վրայ։

Ո՞ւր են այն հայերը, որք միշտ կը փափագին Հա-յաստանի ազատութեան. ահա ժամանակն է։ Ուստի անձնուէր հայ իբրև հայ թող իր նիւթական և ռազ-մական օգնութիւնը և ձեռնտուութիւնը չխնայէ. այս վայրկեանները կորսնցնել՝ հասարակութիւն մը կորսնցը-նել է. ուրեմն գթացէք և կարեկցեցէք մեզ այժմ կամ երբէք։ Բայց վստահ եղէք նաև, որ եթէ ամեն կողմէ ալ անօգնական մնամք, պիտի մնամք նաև միշտ արի, անյողդողդ և անընկճելի ու վերջին ձայն մ՝ ալ պի-

[illegible] սրա վրձակով, բայց [illegible] անհրաժեշտ պայմանները են, որոնց

տի արձակեմք, բայց հողի ներքևէն ևս անէծք պիտի կարդամք այն հայերուն, որ մեր արեան հովիներու մէջ դիաթաւալ խաղալուն հանդիսատես կը լինեն և սնոտի առարկութիւնք մէջ կը բերեն, առանց չափելու և ի նկատ առնելու իրենց շուրջ ի գործ դրված քաղաքական և տնտեսական հալածումն, բանտարկութիւնքն, աքսորն, մահացմունքն, խժդժութիւնքն և այլն...

Կառավարութեան խժդժութիւնք ի Մուշ։

Մշոյ ոստիկանութեան Իսկէնդեր անուն հարիւրապետի անլուր խժդժութիւնքն, որ ի գործ դրած էր Մշոյ արևմտեան-հարաւային լերանց ստորոտներ գըտնվող Ղըշլաղաճ, Գոմեր և Տատրոդոմ գիւղերու մէջ, նախորդ թղթակցութեանց մէջ մանրամասն նկարագրված է արդէն։ Յիշեալ հարիւրապետն իր անասելի և աննկարագրելի կատաղութիւնը խեղճ հայ գիւղացու վրայ թափելէ վերջ, սոյն գիւղերէն երբ տասնի չափ հայ երիտասարդներ ձերբակալելով Մուշ ղրկեց, կառավարութիւնն ևս սկսաւ իր վայրենի կիրքն յագեցնել. շիկակարմիր շամիուրով դաղել ու խարել եկեղիներու մարմինները. բանտարկեալը ծանր շղթայից տակ բեռնաւորեալ մինչդեռ քայլափոխ մը չէն կրնար ընել, անգութ ոստիկանք խարազանաց ազդեցութեան տակ կը ճնշեն։ Այսպէս Կալիէ-Մսուր գիւղի ձերբակալեալ Նօրէ անուն հայն այլ ևս չկրնալով սաստիկ տանջանաց համբերել, բարձր ձայնով կըսկսի պոռալ և սոցա անասելի բարբարոսութեանց դէմ բողոքել ըսելով. „Հայոց կէս մասն ևս բանտերու մէջ մեռցնէք և որչափ ձեր կատաղութիւնն այսպէս բազմապատկէք, այնքան պիտի շտապէք ձեր անկման վրայ և մեր ազատութեան մասին։“ Բայց հարիւրապետ Հաճի Գէյիմը կատաղութեամբ կը հրամայէ սաստկացնել չարչարանքը։ Յայնժամ շղթայակապ դուրս հանելով գետին կը պառկեցնեն, մի քանի ոստիկան ոտաց և սրտի վրայ նստած, կը սկսին մազխիլով պեխերը փետել և աքցանով ատամները քաշել։ Վերջապէս յիշեալ Նօրէն այսպիսի սաստիկ չարչարանաց ազդեցութեան տակ կը հիւանդանայ և շաբթէ մը վերջ մահուան ճգնաժամի տակ կը հեծէ, երբ ողբանօք կը խնդրէ քահանայ կանչել և վերջին արարողութիւն կատարել, զորաց տօքթօրը վրան գալով՝ կը յայտնէ, թէ „առողջ է և դիտմամբ կընէ„։ Գիշերը յիշեալ Նօրէն կը սկսի բարձրաձայն պոռալ աղաղակել. բանտարկեալներէն ևս ոչ ոք կը համարձակի մօտենալ։ Առաւօտուն կը գտնեն երեսի վրայ ինկած, ջղաձգութենէն մարմինը երկարած։ Յայն ժամ տեղեկացնելով Մշոյ քահանայից, կը պատուիրեն, որ գան մարմինը տանին. վերցնելու ատեն՝ վերոյիշեալ տօքթօրը գալով՝ կը սկսի նշտարով Նօրէի դիակը կտրտել ըսելով՝ թէ դեռ չեմ հաւատար սոցա մահուան։ Բօթը կը հասնի Նօրէի տան ու զաւակաց. նոքա ևս չեն համարձակիր գալ, գէթ աղի արտասուաց կաթիլներով սփոփել իրենց սրտի մորմոքը։ Այսպէս միայնակ կը տանեն և կը թաղեն այդ անձնուրաց զոհը, որ անմահ անուն պիտի թողու ապագայ սերընդին։ Նոյնպէս Տատրոդոմ գիւղի ձերբակալեալներէն Դաւօ անուն երիտասարդն իր փախստական հօրեղբօր տղայ Մովսէսի պատճառաւ ձերբակալեալ էր, անլուր և աննկարագրելի չարչարանաց տակ շաբաթ մը հիւանդանալով, սորա հօրեղբայրը և գիւղացիքն կը դիմեն կառավարութեան և շատ կաղաչեն հիւանդը յանձնել իրենց գէթ ողջ տուն հասցնելու և ընտանեաց սրտի մորմոքը մեղմացնելու համար. բայց կառավարութիւնը 50 ոսկիէ աւելի կաշառք առնելէ վերջ օրէ օր արձակումը կը յետաձգէ և առաւօտ մը բանտի մութ ու խոնաւ խորշերու մէջ մեռեալ կը գտնեն։ Երբ սորա մահուան բօթը կը հասնի յիշեալի տուն, մայրը, կինը, մանր տղայք և աղջկունք կը թափին ի Մուշ և գիակը վերցնելով կը բերեն թաղել իր նախահարց գերեզմանաց մօտ, քանի որ հայոց հայրերն ու մայրերն ի կենդանութիւն իրենց զաւակաց տեսութենէն կարօտ կը մնան, գէթ իրենց նահատակաց գերեզմանաց պաղ հողերն տեսնելով սփոփուին. Գիշեր էր. երկայն ճանապարհորդութենէն յոգնած՝ նստած էի հանգստանալու, յանկարծ աչքիս առջև բացվեց այս աղեկտուր տեսարան. մի քանի երիտասարդ յիշեալ Դաւօի դիակը բարձած ուսերու վրայ գիշերային լռութեան մէջ տխուր և դալկադէմ կը յառաջանային. մեռելին զաւակունք բռնած իրենց մօր քղանցքներէն կաղաղակէին „հայր, հայր“ և գիշերային զով զեփիւռին մէջ լոկ „ախ ու վախ“ կը լսվէր։ Այսպէս մեռաւ և թաղվեցաւ սա անմեղ զոհը ևս։ Բայց այսպիսի ցաւերէն առաւել ցաւ կը զգամք որ մեր հայ եղբայրներէն դեռ շատերը մեր այս գրածները վիպասանութիւն կը կարծեն, բայց թող մտնեն Տարոնոյ խորքերը և յայնժամ պիտ կատարելապէս հասկանան, որ այլ ևս սովորական դէպք դարձած են այսպիսի աղեխորշ երևոյթները. մենք ևս այդպիսեաց չգտնեմք ուրիշ պատասխան եթէ ոչ ըսել, որ հանգիստ ընկըղված տաք սենեակներու մէջ միայն ըսել և խօսել գիտեն և իրենց դրութեան վրայ կը չափեն մեր վիճակն ևս։

Իսկ Ղըշլաղաճ գիւղէն ձերբակալեալք Յովհաննէս, Առաքել, Գէորգ և Արթին անուն գլխաւորք բանտի մէջ սաստիկ հիւանդութեան մատնվելով՝ իրենց տրնական կահ կարասիքը, հողն և ամեն ինչ ծախելով և 150 ոսկիէ աւելի կաշառք տալով հազիւ տուն հասան կիսամեռ. դեռ հիւանդ կը պառկին. ով գիտէ թէ նոքա ևս պիտի ազատի՞ն։ Իսկ Տարոնոյ այլ և այլ գիւղերէն ձերբակալեալք դեռ կը հեծեն Մշոյ բանտի մէջ և օրէ օր բանտարկելոց թիւը կստուարանայ։ Այժմ տաճիկ կառավարութեան սովորութիւն դարձած է կամ մեռեալ դիակներ բանտէն դուրս հանել և կամ մերիմահ դրութեան թողուլ։

Ընդհանրապէս Համիտիէ հեծելազօրաց բարբարոսութեանց, աւարառութեանց և սպանութեանց մասին գրված է։ Երբ սոցա վայրենութեան սահմանը չափվի դուրս ելաւ, հազիւ կոյր պառաւ մարդակերը նկատվ և իբր թէ հայերը անդորրութեան մէջ պահելու համար, տասն և հինգի չափ Համիտիէ հեծելազօրաց գլխաւորներ ձերբակալեց. բայց մեծ սարսափ և զարմանք ազդեց ամենու վրայ, երբ օր մը յանկարծ ցերեկուան վեցերորդ ժամին լսվեցաւ, որ Համիտիէ հեծելազօրաց գլխաւորները իբր թէ բռնութեամբ պահապան զորքի

ը ճեղքելով՝ բանտէն փախած և ազատված են։

Թող տեսնեն և հասկանան հայ եղբարք մեր արդի կենցաղի դառն պայմանները...

(Կը շարունակվի)

ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԻՑ

Բասէնի Համիդիէի գնդապետը կը լսէ, որ Տ. Գրիգոր անունով քահանան անման, դեղեցիկ 13-14 տարեկան աղջիկ մը ունի. կը վառվի անոր սիրով և կուզէ իր գաղանական կիրքերը գոհացնել։ Գաղան գնդապետը սպայ մը և քանի մը համիդիէ քիւրդ զինուորներ կուղարկէ Տ. Գրիգորի մօտ և աղջիկը կուզէ։

Երէց և երէցկին սարսափահար այս լուրէն, կուլան կը խնդրեն, որ խնայեն իրենց ծերութեանը և այդ պահանջէն ետ կենան. բայց տեսնելով, որ իրենց ապաչանք պաղատանքը չեն շարժեր անօրէններու սրտերը, երէց և երէցկին կը հրէին սպայի առաջև, ոտքերներն կը փաթթվին և յանուն Աստուծոյ և Սուլթանի կաղերսեն, որ գթայ իրենց. դարձեալ ամենը ունայն կանցնի. սպան իր պահանջի վրայ անդրդուելի կը մնայ և անոյշ խօսքերով կը համոզէ, որ առանց հակառակելու աղջիկն իրեն տան տանի, մանաւանդ որ այդ թէ երէցի և թէ աղջկայ համար շատ մեծ պատիւ յարգանք է։ Քահանան չի համոզվիր և կը խնդրէ, որ իրեն գնդապետին տանին։ Այս վերջին փորձն ալ անօգուտ կանցնի։ Սպան ալ նեղացած այս տեսարաններէն, կը պահանջէ, որ աղջիկն իրենց յօժար կամքով յանձնեն, ապա թէ ոչ բռնի և ծեծով աղջիկը կառնեն, կը տանին։ Ալ ճարահատած, քահանան կը խնդրէ, որ բռնութեան չդիմեն, օր մը ժամանակ տան աղջիկը համոզելու համար։ Ասոր սպան կը համաձայնի սպառնալով, որ եթէ միւս օրն աղջիկը չյանձնեն, կամ անոր պահէն կամ փախցնեն, տնով տեղով բոցերու մէջ կայրեն։ Այս պայմանով սպան իր մարդերով կը մեկնի։

Երէց և երէցկին երկար խորհրդակցելէն, իրենց և աղջկայ սև բաղդն անիծելէն ետքը, լաց-արտասուքով կը վճռեն աղջիկին զոհել՝ ընտանիքն ազատելու համար. "Մէկը թող մեռնի, մէկալներն ազատվին. կարելի է Աստուած մը բաղում, ծովեալ մեղաց համար է, որ մեզի այսպիսի պատիժներ կուտայ", կըսեն ծնողքը և կը պատրաստին միւս օրն անմեղուչ գառը գայլի ճանկը ձգել։

Վա՜յ քեզ, ժողովուրդ, որ դեռ չես հասկցեր, թէ այդ օրինակ ստրկական կեանքը մարդերու վայել չէ, այլ անբան անասուններու, այլ շուներու է վայել, շուներու։ Վա՜յ քեզ ողորմելի և թշուառ ժողովուրդ, որ "մի անգամ միայն մեռնելէ վախցար, հաղար-հազար մահ աչքովդ տեսիր", որ կաթիլ մ'արիւնէն սոսկացիր, ամե՛ն օր արուն-արցունք ոթեցիր, ճակտի քրտիքդ այլոց կերցուցիր։ Ոքան շուտ ազատիս դու քո այդ թմրեցնող, սպանիչ կարծիքներդդ, խաւար ու սարկացնող հաւատքդ՝ այնքան շուտ կազատվիս քո շնավայել վիճակդդ, այնքան արագ պիտի ստանաս քո ազատութիւնը, քո կեանք և պատիւը։

Նոր սերունդն արդէն հասկցած է այս. և նոյն իսկ երեցի 18-20 տարեկան կտրիճ տղան այլ ևս հօրը պէս չի դատեր, հօրը պէս չըմբռներ աշխարհը, կեանքը և մարդիկ ու անոնց յարաբերութիւնները։

Աղջիկն այս ամենը, ինչպէս և ծնողներու որոշումը կը լսէ, իրիկունը հիւանդ եմ ըսելով՝ անկողին կը մտնէ և լռիկ-մնջիկ իր սև օրը կուլայ, եղբօրը կըսպասէ։ Իրիկունը երէցի 18-20 տարեկան տղան տուն կուգայ. ծնողքը անցած դարձածի մասին բան մը չեն զուրցեր, որովհետև արդէն յայտնի էր իրենց անոր տաքարիւն, կրակոտ բնաւորութիւնը և անոր վերջին դէպքերէն արդէն գրգռված հոգին։ Միշտ խրատ ու խորհուրդներով կը զգուշացնէին զինքը, որ անզգոյշ քայլ մը, անխոհեմութիւն մը չգործէ. սրտերնին միշտ վախու մէջ էր, մանաւանդ այն օրէն, երբ պատահաբար մայրը տղուն ձեռքը րեվոլվեր մը տեսաւ, որ կը մաքրէր։

Տղան ալ յոգնած ըլլալով շուտ կը պառկի, բայց լացի ձայն կառնէ. ականջ կը դնէ և կը տեսնէ, որ լացողը քոյրն է։ Կը հարցնէ լացի պատճառը և քոյրը կամացուկ մը կը պատմէ այդ աւուր անցած-դարձածը և ծընողաց որոշումը։

Քոյրն ամեն ինչ պատմելէն ետքը, կաղերսէ եղբօրը, որ իրեն ազատէ անօրէններու, գաղան գնդապետի ճանկերէն։ Եղբայրը խօսք կուտայ։ Երբ տղան կը տեսնէ, որ ամենքն ալ քնացան, կամացուկ մը ինքն ու քոյրը դուրս կելնեն. տղան կերթայ կառնէ պահած ռեվոլվերը և բոլոր ունեցած 30 գնտակը և կը փախչին լեռը։ Առաւօտը երէց և երէցկին սարսափահար կիմանան եղելութիւնը և ահ ու դողով կը սպասեն գաղաններուն, որոնք իրենց սև ու դաժան դէմքերը չեն ուշանար երևցնելէ։

Սպան և քիւրդերը լսելով, որ աղջիկը տունը չէ, որ եղբօր հետ փախած է, նախ չեն հաւատար, բայց երբ երէցը կերդնու, որ անիծեալ զաւակը գիշերն, իրենց քընացած ատեն առած գացած է, ստուգելու համար անմիջապէս խուզարկութիւն մը կը կատարեն, տան ամեն ծակ ու ծուկ աչքի կանցուցեն, բայց աղջիկը չեն գտնիր։ Ան ատեն կատաղած ու փրփրած սպան կը սկսէ անգութ կերպով ծեծել երէցը, անլուր հայհոյանքներ թափել անոր գլխուն, անոր հաւատքը, կրօնը, ազգութիւնը հայհոյել ամենալիրը ու ծանր խօսքերով։ Ծերունի երէցը կերդնու, որ ինքն ամենևին տեղեկութիւն, մասնակցութիւն չէ ունեցած աղջկայ փախուստի մէջ։ Բայց որո՞ւ կը հաւատցնես։ Սպան զայրացած փախուցած որսի համար, և վախնալով գնդապետի ծանր յանդիմանութենէն, գուցէ և պատժէն, իր վրէժը կը լուծէ երէցին և ամբողջ գիւղին։ Կը հրամայէ նախ խուզարկել երէցի ազգականներու տունները, եթէ չգտնին, ամբողջ գիւղը քար ու քանդ անեն, մինչև որ գտնեն կամ յանձնեն աղջիկը։

Բոլոր խուզարկութիւնները անհետևանք մնացին և աղջիկը չգտան։ Այդ խուզարկութիւններու ժամանակ քիւրդերն ամեն չարիք կը գործեն. ամենապզտիկ դիմադրութիւնը չարաչար կը պատժվի. արժէքաւոր ինչ որ գտնին, կառնեն. քանի մը հարսերու և կիներու պատիւնին կը բռնաբարեն։ Խուզարկութեան ատեն մէկ-երկու հատ մ'ալ զէնք կը գտնին, որոնց տէրերն իբրև անհաւատարիմ և ապստամբ կը բանդարկվին։ Գիւղը խուզարկած ատեն ամեն կողմ մարդիկ կը հանէ սպան, որ լեռներ ու ձորեր կընկնին որսկան շուներու պէս անմեղ որսը ճանկելու։ Երկու քիւրդեր վերջապէս կը յաջողին

[illegible] դատը չէ, որ դրսէն զբաղու

փախստականներու հետքը գտնել. կը հետամտին անոնց։ Վերջապէս կը տեսնին փախստականներն և կը սկսեն հալածել։ Եղբայրը տեսնելով, որ ալ փախչելով անհնարին է գազաններու ձեռքէն ազատիլ, քրոջը հետ կաճապարէ ժայռի մը տակ ապաստանիլ և քիւրդերու մօտեցած ատեն կը սկսէ բեվօլվերով ինքզինքը պաշտպանել։ Քոյրը տեսնելով, որ ազատելու յոյս չկայ, կաղաչէ եղբօրն սպանել զինքը և իրեն կեանքը փրկել փախչելով։ Ցգան մինչև վերջը կը պաշտպանվի, անձնատուր չըլլար. վերջապէս գնդակները կը սպառին և կը մնայ միայն երկու գնտակ, սև օրուայ համար պահված... Քոյրը շարունակ կաղաչէ եղեր սպանել զինքը, գոնէ մահով փրկել իր անձը և պատիւը գազաններէն։ Վերջապէս կտրիճ հայ երիտասարդը ակնթարթի մը մէջ կը վճռէ քաջութեամբ և պատուով մեռնիլ քրոջ հետ։ Կրակոտ համբոյր մը կը դրոշմէ իր քրոջ անմեղ ճակտին, գնտակներէն մէկն իր սիրած քրոջ սիրտը կը մխէ, մէկալն իր և վարկենի մը մէջ երկու դիակներ արիւնաթաթախ ժայռին տակ կը գլորվին։ Քիւրդերը կը հասկնան և վրանին կը յարձակին, աղջիկը մեռած կը գտնին, իսկ կտրիճ երիտասարդը վիրաւոր և կիսակենդան։

Քիւրդերն իրենց յոյսերու մէջ խաբված, իմաց կուտան մօտակայ գիւղի կառավարութեան, որ իրենք ականատես էին, թէ ինչպէս վիրաւորվածը սպանեց աղջիկը և թէ երբ տեսաւ, որ պիտի ձերբակալվի, ազատվելու համար ուզեց ինքզինքը սպանել, բայց չյաջողեցաւ։

Տեղական բաշիբուզուկ կառավարութիւնը կը բանտարկէ կտրիճ երիտասարդը, իբրև մարդասպան, բայց երկար չապրիր պատանին. երեք օրէն կը մեռնի բանդին մէջ։

Մեռաւ, բայց պատիւն իրենէն բարձր համարեց....

Այսպիսի մահերը, այսպիսի անկումները մահեր չեն, այլ մէկ մէկ յաղթանակներ. այսպիսի յաղթանակներու զարնվելով պիտի փշրվի Թրքական զզուելի բռնապետութիւնը և ազոնցմէ պիտի ծնի նոր, աւելի արդար ապագան։ Այսպիսի երիտասարդներու մահը պարծանքով է յիշելու Հայ ժողովուրդը, սերնդէ սերունդ պատմելով, պիտի անմահացնէ ադոնց անունը, իբրև անմահ օրինակ անձնազոհութեան և անձնուիրութեան։

ԼՈՒՐԵՐ

ԵՐԶՆԿԱՑԻՑ — Համբերութիւնը կեանք է, իսկ երկար համբերութիւնը իշու նահատակութիւն։ Բաւական ժամանակ համբերեցինք, այժմ ալ չենք կրնար տանել, ինչու որ ցաւերը, հարստահարութիւնք, սպանութիւնք օր աւուր կաւելանան։ 50 օխանոց ծանր ու ահագին չղթաները երկար ժամանակ մեր հարազատների ոտքերը կտրելէն վերջ, այժմ սկսած են թոկ գործ ածել մեր խղճալի կեանքին վերջ տալու։ Արիանեան հաճի Գալուստի եւ իր չորս ընկերների համար նամակէս քանի մը օր առաջ կարդնէն հրաման եկած է, որու մէջ շուն խնամող Սուլթանը հրաման տված է դրանց կախաղան բարձրացնել։

Բրոյխորոնեան Վարդան վարդապետը գիշերով տեղս բերին եւ բանտարկեցին։ Բանտարկութեան պատճառը յայտնի չէ։ Քովը մարդ գնալու իրաւունք չկայ։

Բթալիճ գիւղի Վահետ բէյի դրդմամբ Մինասի 15 տարեկան աղջիկը կը փախցնեն եւ բռնի կը տանիկեցնեն։ Այս տարուայ ընթացքում դոյնանման դէպքեր 10-էն աւել պատահած է։

Դերջանի Ծղարի գիւղի մէջ 15 զինված տաճիկներ գիշերով կը մտնեն տանուտէրի տունը, նրան եւ իր երկու եղբայրներին կը վիրաւորեն եւ սարսափելի տանջանքներով փողի տեղն իմանալով, կը հաւաքեն փող, մալ, ապրանք ու կանհետանան, ցարդ անպատիժ մնալով։

ՄՈՒՇԵՆ.— Մուշ ծանր դէպքեր տեղի ունեցեր են. թէ Մուշ եւ թէ շրջակայ գիւղերը բաղմաթիւ ձերբակալութիւններ տեղի ունեցեր են։ Ձերբակալվածներու մէջ կան վարդապետներ, քահանաներ, ուսուցիչներ, վաճառականներ, ռէսներ, արհեստաւորներ, երկրագործներ եւ քանի մը կիներ։ Ձերբակալվածները մասնութեան զոհեր են։ Մուշը Հայաստանի ամենայեւ ընկած, անյայտ, եւրոպական տէրութեանց եւ հիւպատոսներու աչքէն ու ուշադրութենէն հեռու ընկած այսպիսի անկիւն մըն է, ուր թիւրք բռնապետութիւնը անագորոյն կերպով կը կեղեքի, կը հարստահարէ, կը հալածէ եւ ուր կամայականութիւնն ու բռնութիւնը չափ ու սահման չունի։

ՊՕԼՍԻՑ.— Ցայտնի յեղափոխական Միհր. Տամատեանն արձակվեց բանտէն եւ այժմ ազատ կը շրջի։ Տամատեան իր ազատութիւնը, կըսվի, գնած է բաղմաթիւ մասնութիւններով։ Ժողովրդի, մանաւանդ մէջեցիներու վրայ Տամատեանի ազատութիւնը սոսկալի վատ ազդեցութիւն ըրած է։ Ոտքի մէկը կոտրած ըլլալուն համար, նա մեծ մասամբ կառքով կը շրջի։

— Ռուսաց դեսպան Նէլիւոֆ համիդիէի հեծելազօրքի բռնութեանց մասին Բ. Դուռը յայտագիր մը կը ներկայացնէ, որի մէջ յիշված է ի միջի այլոց եւ Ալաշկերտի մէջ պատահած կոտորածը, որի զոհ գնացին մօտ 200 հոգի։ Իսկ անգլիական դեսպանը բողոքած է Եօզղադի դատավճռի դէմ, որով 17 հոգի մահուան են դատապարտված։ Զնայելով դրան՝ երկու հոգի արդէն կախաղան են բարձրացրած։

Սիմէօն-բէյի համար դատապարտվածներու մահուան վճիռը փոխվեցաւ ցմահ բանտարկութեան։

Խափանվեցաւ „Աւետարեր“ շաբաթաթերթը սովելոց մասին դրած, գրաքննիչի խիստ քննութեան բովէն անցած թղթակցութեանց եւ ստացած 3 ոսկի նպաստի համար։

— Քանի մը Սֆիսն Կարահիսարցի հայեր, ցանկանալով էջմիածին ուխտ երթալ, ինչ ինչ դժուարութեամբ անցագրեր կը կարողանան առնել։ Սակայն Պոլիս հասնելու թուղթ կը կարողանան առնել։ Սակայն Պոլիս հասնելով պէս խանի մը մէջ անմիջապէս կը ձերբակալվին։ Մնացեալ կառավարութեան սոված պաշտօնեաները չուզենալով օգտից զրկվել, անցագրեր կը տան, ահագին գումար կորզելով, եւ մի եւ նոյն ժամանակ Պոլիս կը հեռագրեն, որպէս զի այդ հայերուն թոյլ չտրվի Ռուսաստան մեկնելու։ Ահա 8 օր է բնաւ տեղեկութիւն չունինք, թէ ինչ եղան մեր ուխտ գնացող Կարահիսարցի հայրենակիցներ։

Կ.Պոլսոյ այժմեան կեանք աւելի վատթար դառած է։ Կասկն, ժամանակ մը յոյներ կառավարչական հարստահարութիւններէն ազատ մնալու համար իրենք զիրենք հայ կանուանէին։ Ժամանակները փոխված են այսօր. հիմա ալ հայը իրեն յոյն կը ձեւացնէ ստէպ ստէպ կասկածներէն եւ տանջանքներէն խուսափելու համար։

ԽՈՒԶԱՐԿՈՒԹԻՒՆ

(ՆԱՄԱԿ ՎԱՆԻՑ)

Տակաւին առիթ չենք ունեցած բացատրելու, թէ թրքական խուզարկութիւնները ի՞նչ ձեւի տակ կը լինին, ինչքա՞ն խստութեան եւ զգուշութեան ներքոյ։ Անցեալ տարի կէս, կամ երկու տարի առաջ խուզարկութիւնները աւելի պարզ ձեւ ունէին եւ քիչ մ՝ ալ անհոգ կ՝ լինէին, որով մարդ դիւրութեամբ կարող էր խոյս տալ կասկածաւոր թղթեր, իրեր փախցնել կամ տեղն ի

ղրն անհետացնել։ Առաջներ մօտաւորապէս 5-էն 10 ձիաւոր, նոյն չափ էլ հետիոտն զափտիաներ Թաբուր — աղասիի (զափտիաների պետը, գնդապետի աստիճանով) և պօլիս կօմիսերի (ոստիկանութեան պետ) ու մի քանի փոլիսների առաջնորդութեամբ կելնէին խուզարկութեան և յանկարծակի կասկածելի տան դուռը կը բռնէին միայն փողոցի կողմից։ Եթէ բան չգտնէին առանց որևիցէ վնասի կը հեռանային։ 92-ին կրկնապատկուեցաւ խուզարկողների թիւը և զգուշութիւնը։ Այդ ժամանակ հետիոտ զափտիաները ծածուկ կը մտնէին խուզարկվող տան այգին և փողոցի ու այգու դուռը միաժամանակ կը բռնէին։

Խուզարկութեան այս երկրորդ շրջանի մէջ, որ յաճախ կը կրկնուէր, սկսաւ կամաց-կամաց անկարգութիւններ, վիրաւորանքներ տեղի ունենալ։ Կանանց վրան, գրպաններն սկսան խուզարկել, որ առաջ չկար։ Անկարգ և յաճախակի խուզարկութիւնը ժողովրդի վրայ երկիւղ ազդեց. մէկ կողմէն ալ վալին պաշտօնական յայտարարութիւն տարածեց, մանաւանդ գիւղերը. „Որ տան մէջ հայ կաչաղ ձերբակալվի, այն տունը պիտի հրդեհել, տան տղամարդիկ 3 տարիէն մինչև անորոշ ժամանակ բանտարկել և տան ունեցած բոլոր կայքն ու կալուածները յարբունիս գրաւել։"

Յեղափոխականների գրութիւնը բաւականին ծանրացաւ։ Հալածվածների համար ապաստան գտնելը, գործելու միջոցները և առհասարակ յարաբերութիւնը շատ դժուարացաւ։ Մարդ մարդու հետ խօսելէ կը զգուշանար. կառավարութեան բռնի ստեղծած հայ զափտիաներու (լրտես) թիւը շատացաւ. յեղափոխականները քայլ մը առնուլ կը դժուարանային։ Սակայն այս դրութիւնը երկար չտևեց։ Կազմակերպութիւնն եռանդուն կերպով սկսաւ արգելքներն հեռացնել, անձամբ, փորձնական օրինակով ժողովրդի զգայուն մասին ցոյց տուեց աներկիւղ լինել։ Ժողովուրդն սկսեց հետզհետէ ընտելանալ բարբարոս խուզարկութիւններին, մանաւանդ աւելի սիրտ առաւ, երբ տեսաւ գարնող յանդուգն յեղափոխականներ։ Կազմակերպութեան որոշմամբ մի քանի թիւրք ոստիկաններ և հայ մատնիչների սպանվիլը շատ յառաջ քաշեց հասարակութեանը։ Այնուհետ չբկար ապաստանի և յարաբերութեան մեծ դժուարութիւն։

Նոյն այս նկարագրած ժամանակէն քիչ առաջ, այս խուզարկութիւնը, խուզարկողների թիւն ու զգուշութիւնները կառավարութեան կողմանէ եռապատկուեցաւ, քառապատկուեցաւ։ Այժմ ոստիկանները չէին բաւականանար փողոցի և այգու դուռը բռնելով և ոչ էլ մէկ տնով։ 30-էն մինչև 50 ձիաւոր, նոյնչափ էլ հետիոտն ոչ թէ մի, այլ 5, 10 մինչև անգամ 25 տուն կը պաշարէին միանգամից։ Պէտք է ի նկատի ունենալ, որ ինչքան ժողովուրդը կը սարսափէր, նրանից աւել տագնապի մէջ էր խուզարկող ոստիկանութիւնը, որովհետև փորձով տեսաւ, թէ հայ յեղափոխականն առանց զինվորութեան կը զարնէ։ Այդ պատճառով երբէք հաճելի չէր թուրք ոստիկանին հանդիպել, ուր որ լինի, հայ ապստամբին։ Շատ անգամ պատահած է, որ խուզարկող գլխաւորները այնպիսի ձևեր են բանեցրել, որով իմացրած են, թէ այս ինչ թաղը պիտի երթան խուզարկելու, որպէս զի յեղափոխական լրտեսները իմանան և եթէ կայ, այն տեղէն փոխադրեն հայ „կաչաղին"։ Շատ անգամ պատահած է, որ երկիւղից չեն համարձակվել կասկածաւոր տունը մտնել, այլ քառորդ ժամ տան շուրջը թափառելով՝ կամ փողոցներից կամ որևէ տնից հայ մը դուրս քաշելով իրենց առաջ ձրգած մտել են կասկածաւոր տունը խուզարկութեան, գունաթափ և դողդողալով։ Տան ամեն մի մասը առաջնորդող հայը կը մտնի, յետոյ իրենք։ Այսպիսի տասնեակ օրինակներ տեսանք ամէնքս։

Հետիոտ զափտիաները կը գործեն այգիների կողմից, կը բռնեն տանիքները, իսկ ձիաւորները փողոցների կողմից։ Պաշարող խումբը սուր քաշած և հրացանները փամփուշտ դրած՝ համարեա նշան առնելու վրայ, (չեմ գիտէ որո՞ւ) իսկ խուզարկող խումբը, նոյնպէս սուր քաշած, բեվոլվեր ու հրացան պատրաստ բռնած, դողալով ներս կը մտնէ։ Թաբուր աղասին, որի պարտաւորութիւնն է առաջինը ինքը մտնել սենեակները, իւր աջ և ձախ կողմում երկու անվախ զափտիաներ պահելով հրացանները պատրաստ, միշտ կը փափագի, որ նրանք իրմէ մի քայլ առաջ լինեն։ Երբեմն Թաբուր աղասին և փոլիս կօմիսերը մէկը միւսին խածուռել են և ահագին դժգոհութիւն հանել, ստիպելով միմեանց առաջ ներս մտնել չնաշխարհիկ „կաչաղների" պահված տեղը։ Մի անգամ Նորաշէն Թաղի վերին ծայրը տուն մը կը խուզարկեն, կելլեն երկյարկ սենեակ մը և իրենց անկարգ իրերը խառնելուց, ինչպէս կը պատահի, անկողինների շարքը կը բլի. մէկէն երկիւղէ բռնված, շնչասպառ սանդուխից կը թափվին բակը իրար հրշտկելով, կարծելով թէ, հոն, անկողիններու մէջ հայ ապստամբ է թաղնված։

Խուզարկութեան համար ձմեռն միանգամայն անտանելի է։ Կառավարութիւնը ազատ կը շարժի, իսկ „կաչաղների" հետքը միշտ կարող է իրենց մատնել։ Ոստիկանութիւնը, իրենց հետ էլ կարճամիտ վալին կատաղեցան ու դիւահարեցան մանաւանդ, երբ Նուրիի ըսպանութեան խնդրով ձերբակալուած Օտեան Գ. և երկու Կորեկցեաններ (ասոնցմէ մինը հազիւ 16 տարու լինի)գիշերը բանդէն փախան։ Այս յանդուգն փախուստը ճիշտ որ տաճիկներուն ապշեցուց և հայերուն ոգևորեց։

Խուզարկութեանց մեծ մասը գիշերը կը կատարվէին Լրտեսներն ամէն կողմ կը վխտային, կեն լրտես անգամ ճարվեցաւ և դարձեալ ոչինչ չկարողացան անել։ Քաղաքի մէջ պահվողների թիւը բաւական շատացաւ. բայց ժողովրդի զգայուն մասը ոչինչ չխնայեց իւր յեղափոխական եղբօրը պահելու համար, ծանր փորձով մ'ալ ապացուցեց, թէ սրտի խորքէն կը համակրէ յեղափոխական գործը։

Խուզարկութեան երրորդ շրջանը, ինչպէս կը տեսնաք, իւր կատարեալ պատերազմական դրութեամբ կսպառնար չթողուլ գործողներուն քայլ մ'առնուլ։ Ուրիշ բան չէր մնար ընել, բայց եթէ փախստականներուն ձերբակալվելու վտանգի մէջ դնել, կռվելու գործիքները ան-

հետացնել, խոնաւ հողի մէջ փթեցնել։ Բայց չէ՞ որ սաստիկ ճնշումները հնարներ ստեղծել կուտան։ Եւ յեղափոխականներն այնպիսի միջոցներ ձեռք բերին վտանգներ յանձն առնելով որ վալիի գործ դրած միջոցները յօդս ցնդան։

Խուզարկող ոստիկանութիւնը, ինչպէս ըսինք, քանի մը տուն շղթայելէն ետքը, տագնապով, երկիւղէ բռնուած ու գոյնը նետած ներս կը մտնէ։ Երբ, խուզարկելէն վերջը, կը նկատի, թէ տան մէջ կաչաղ չկայ, այդ վախկոտների խումբը կը դառնայ առիւծ։ Հայհոյանքներ կը տեղան տան տիրոջ գլխուն, երբեմն նոյն իսկ ծեծ։ Լկտի և անպատկառ խօսքեր կուղղեն կանանց և նրանց այժմ կանոնաւոր կը խուզարկեն։ Կանայք ևս սկսած են վերջերս դիմադրութիւն ցոյց տալ, որոյ համար վալին դժգոհութիւն յայտնեց և եկեղեցիներու մէջ ծանուցում ընել տուաւ, որ կանայք լկտի խուզարկութեանց չհակառակին։

Հայհոյանքներէ և ծեծերէ վերջ, այդ 60-80 հոգին ներս դէք լցուին տները, բռնի հաց կը պահանջեն (ինչպէս միշտ ըրած են գիւղերը) ձիաններուն կեր կուզեն։ Այս անօթի գայլերը այնպիսի ագահութեամբ կը թափվին հացի վրայ, որ կարծես անօթի կը պահեն իրենց փորերը, մինչև երթան խուզարկութեան։ Սուլթանին պատիւ բերող զինուորները հացէն վերջ շնորհակալութիւն կրնեն, այսինքն տանտեակներով կը լեցվին տան անկիւնները և տունը կողոպուտի կուտան։ Գողցած են կանանց ոսկիներ, շատ անգամ զօռով վզերէն պոկած։ Գողցած են ամեն տեսակ, թէ տղամարդու, թէ կանանց հագուստներ. շրջազգեստներ, գոգնոց, գլխու կապոց, չարշափ, վերարկու և այլն։ Անցեալներ Ցայնկոյսներ թաղին մէջ խուզարկութենէ վերջ, ի միջի այլոց գողցան կիսամաշ գուլպաներ. իսկ մայիսի սկզբները նորաշէն թաղին խեղճ շատախցու մը տունը, որ թաժա հաց կը թխէին, նայելէն վերջ, մօտ 40 զափտիա ներս կը թափվին և անվախ կերպով հայ "կաչաղի" փոխարէն թազա հացերը կը ձերբակալեն։ Սրամիտ վանցի մը լաւ է ըսեր. "Պէտք է դիմել բոլոր վանեցիներուն և ընդհանուր աղերսագիր մ'ուղարկել ամենողորմած սուլթանին, որ այդ 300-ի չափ բոլորովին անմեղ թազա հացերը չար գերութենէ ազատէ"։ Աղքատ մարդն իր օրապահիկէն ետ ձգելով, հացիւ կարողացել էր պարկ մը ալիւր առնել...

Անշուշտ խենթ վալիի հրահանգովն է, որ այսպէս կընեն, որովհետև դժգոհութիւնն իրեն հասաւ և ինքը չը լսեց։ Առաջներն այս աւազակութիւնը ենչին էր, այնպէս որ ծիծաղ կը շարժէր, բայց յետոյ սկսեցին սաստկացնել։

Սիրելի բարեկամներ, բաւական երկարօրէն նկարագրելով թրքական տարօրինակ խուզարկութիւնները և նրա հետ զուգընթաց ժողովրդի յեղափոխական ոգու բարձրանալը, չկարծէք, թէ կուզեմ ըսել, որ հասարակութիւն մը յեղափոխական դարձնողը միմիայն կատաղի խուզարկութիւններն են։ Կուզեմ ըսել, որ անոնք բորբոքման զօրեղ ֆակտօրներէ մինն են, ինչպէս փորձը կը ցուցնէ։

Քանի մը ամսուայ մէջ մօտաւորապէս 2000 տուն խուզարկված են, վանայ հետ առնելով նաև Աւանց, Շաղբաղի և Կողբանց գիւղերը, որոնցմէ երկուքը համարեա Վանին արուարձանները կրնան համարվիլ։

Այս գիւղերու մէջ 300-ի չափ տուն խուզարկվեցաւ, 15 անգամ խուզարկեցին Ս. Գրիգոր, Կարմրաւոր և Վարագ։ Այս վերջինս մի ամսուայ մէջ 10 անգամ ենթարկվեց խուզարկութիւնների, որոնց մէջ նշանաւոր է վալիի անձամբ կատարածը։

Մայիս 9-ին վալին 50 ձիաւորով, Պողոս եպ. և քանի մը հարուստ հայ դաւաճաններ հետն առնելով, կելէ շրջագայութեան և մէկէն ուղղութիւնը փոխելով վանքը կը կոխէ։ Ինքը կը նստի վանահօր սենեակը և ամբաստանելով նայել կուտայ, բոպէ առ բոպէ անհամբեր սպասելով, որ հիմա պահապանները զինված կաչաղներ հանելով՝ իրեն կը ներկայացնեն. բայց զուր։ Ամօթահար յետ կը դառնայ։ Այդ օրը վանքի սեղանից զաֆտիաները միւռոնի արծաթէ տուփը գողցել էին, որ ամսէ մը վերջը հայ ոսկերչի մը մօտ գտնվեցաւ։ Վարագայ շատ վնաս հասուցին ուտեստի նկատմամբ. ամեն անգամ 50-60 ձիաւորով ամբողջ օրով կը լափեն ու կը թափեն, ձիանները վեր կը վարեն մարագներու և արտերու մէջ։ Վարագայ միաբանութիւնը զզվելով այս գէշ և աւերիչ վարմունքէն, օր մը իւր բոլոր անդամներով իջաւ քաղաք և առաջնորդարանէն պահանջեց, որ կամ վանքի բանալիները պաշտօնապէս ձգվի վալիին և կամ այս անկարգ վարմանց վերջ տրվի։

Կարմրաւոր վանքի խուզարկութեան ժամանակ ձերբակալեցին վանքի կառավարիչ ժիր և ժողովրդից յարգված երիտասարդ Յովհաննէսին և միաբան Պողոս վարդապետին, որոնց կը մեղադրէին իրրև կաչաղ պահողներ։ Մէկ փաստ չունենալով մեղադրելու, շուտով արձակվեցան ազդեցիկ մարդոց ձեռքով։

Ամեն անմեղ ձերբակալված վալին ամիսներով ու տարով կուզէ պահել, ըսելով. "կը թերպիէ օլսուն" (թող խրատվի)։ Մոռցայ ըսել, որ այդ երիտասարդ Յովհաննէսին ձեռներն ամուր կը կապեն ետևը ու ժամով արևի տակ կը թողուն։ Ապա թաբուր աղասին կը հրամայէ 100 փայտ զարնել, որ կաչաղներու տեղն ըսէ։ Եւ այս բոլորն ուխտաւորներու ներկայութեամբ։ Նա լուռ էր։ Ամենքը կը զարմանան, որ այդ ծանր հարուածներու տակ երիտասարդն "ոչ" մ'անգամ չըներ։

Նիւթերի առատութեան պատճառով անկարող եղանք ներկայ համարում խօսել մեր ծրագրի մասին։

Նուիրատվութիւնների ցուցակ.—

Կրս.-ից 100ր. Եկդ. 400ր. Ա. Գ-ի միջոցով 250ր. Նշից 135ր. Զոկից 65ր. Ն-ից 130ր. Ք-ից 100ր. Աջ. 175ր. Կջ. 20ր. Մսկ. 1500ր. Գնձկ. 99ր. Ռ. Ա. 10ր. Ռ.-ից 280ր. Վահնէք 46ր. 70կ. Օդս. 350ր. Ք.-ից 30ր. Քշն-ից 500ր. Ղրսբզ. 450ր. Կայծիկ 100ր. Մցարը 200ր. Ռ.Ժ. Ա. 10ր. Դձկ. 160ր. Ռ.Ք. 200ր. Վ. 10ր. Լ. Մ. Վ. 2ր. Քշ. 100ր. Ջ.Լ. Խ. 11ր. 50կ. Մսկ. 100ր.

(Կը շարունակվի)

Դաշնակցութեան անծանօթներից խնդրվում է թղթակցութեան և նուիրատվութեան համար դիմել. L. Boole, 15, Augustus Rd., Hammersmith, W, London.

Վիեննա. Դաշնակցութեան ազատ տպարան